ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆԱԶԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ ՊԱՐԳԵՎԻ

«ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ՀԱՅԿԱԿԱՆ, ԱՄԵՐԻԿՅԱՆ ՈՒ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԸ ՓԱՐԻԶԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ՇՈՒՐՋ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2021

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հայրունի Աշոտ Նորայրի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Պողոսյան Սամվել Անդրանիկի

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ղամբարյան Արմենուհի Վանյայի

Առաջատար կազմակերպություն՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2021 թ. ապրիլի 30-ին, ժամը 15^{00}-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2021 թ. մարտի 15-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Մուրադյան Հ. Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության գիտական նշանակությունն ու արդիականությունը:

Հայկական դատը եղել և մնում է հայությանը հուզող կարևորագույն հարցերից մեկը: Հայաստանի Հանրապետությունն իր երկու հարևան երկրների՝ Թուրքիայի և Ադրբեջանի հետ, ի հետևանք իր լուծումը չգտած Հայկական հարցի, ժառանգել է բարդ հարաբերություններ: Արդի Հայկական դատի հիմքում ընկած են 1919-1920 թթ. Փարիզի խաղաղության վեհաժողովի[1] արդյունքում կնքված իրավական փաստաթղթերը[2]: Հետևաբար, այդ փաստաթղթերի առաջացման և այդ առնչությամբ ինչպես խաղաղության վեհաժողովի ժամանակ, այնպես էլ դրանից առաջ և հետո տեղի ունեցած զարգացումների հիմնավոր և ամբողջական լուսաբանումն ունի թե՛ գիտական և թե՛ քաղաքական կարևոր նշանակություն:

Սույն ատենախոսության մեջ ներկայացվում է «միացյալ» կամ, ինչպես հաճախ փաստաթղթերում նշվում էր, «ամբողջական» Հայաստանի՝ հայկական, ամերիկյան և բրիտանական նախագծերի զարգացման պատմությունը, որը սկսեց ձևավորվել Առաջին աշխարհամարտի վերջին տարիներին և ամբողջացավ 1919-1920 թթ. ընթացքում[3]՝ արդյունավորվելով մի շարք փաստաթղթերի ստորագրումով:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության նպատակն է արխիվային վավերագրերի, տվյալ ժամանակաշրջանի պետական ու քաղաքական-հասարակական գործիչների հուշագրությունների, ինչպես նաև հրապարակում եղած առանձին ուսումնասիրությունների հիման վրա ներկայացնել և քննական վերլուծության ենթարկել հայկական, ամերիկյան և բրիտանական կողմերի՝ 1918-1920 թթ. «միացյալ Հայաստանի» նախագծերի կազմման պատմությունը: Ելնելով ատենախոսության

---

[1] Որոշ հեղինակներ «վեհաժողով» եզրույթի փոխարեն օգտագործում են «կոնֆերանս» կամ «խորհրդաժողով» բառերը: Ընդունելով կոնֆերանս և խորհրդաժողով բառերի համարժեքությունը՝ մենք պահպանել ենք սկզբնաղբուրներում գործածվող «վեհաժողով» եզրույթը, քանի որ այն առավել ճիշտ է արտացոլում Դաշնակից հինգ տերությունների (Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, ԱՄՆ, Իտալիա և Ճապոնիա) կողմից ղեկավարվող խաղաղության կոնֆերանսի էությունը:

[2] Դա առաջին հերթին վերաբերում է Սևրի պայմանագրի 89-93-րդ հոդվածներին և ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնի կողմից կայացրած իրավարար վճռին: Դրանց արդիականությունն ամրագրվեց 2015 թ. ՀՀ նախագահի կողմից ներկայացված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագրում, որն ընդգծում էր «Սևրի հաշտության պայմանագրի և 1920 թվականի նոյեմբերի 22-ի՝ ԱՄՆ-ի Նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճռի դերը և նշանակությունը Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հարցում»: Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 2015 թ. հունվարի 30:

[3] 1919 թ. հայկական, ամերիկյան և բրիտանական նախագծերում ներկայացված «Ամբողջական» կամ «Միացյալ» Հայաստանը պետք է ներառեր Արևելյան Հայաստանը, ինչպես նաև Օսմանյան կայսրության Վանի, Բիթլիսի, Էրզրումի, Դիարբեքիրի, Խարբերդի, Սեբաստիայի և Տրապիզոնի նահանգներն ու Կիլիկիայի տարածքի մեծ մասը: Վերոնշյալ երկու եզրույթներն օգտագործվում էին զուգահեռաբար և պայմանականորեն, իսկ որոշ դեպքերում փոխարինվում էին «ծովից ծով Հայաստան» անվանումով: 1920 թ. սկսած «միացյալ Հայաստան» եզրույթը նույնացվում էր ավելի սեղմ տարածքի հետ, որն ընդգրկում էր Արևելյան Հայաստանը և Օսմանյան կայսրության չորս հայկական նահանգների (Վան, Բիթլիս, Էրզրում և Տրապիզոն) զգալի մասը:

նպատակներից՝ մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

- Համառոտ անդրադարձ կատարել Առաջին աշխարհամարտի շրջանում «միացյալ» կամ «ամբողջական» Հայաստանի գաղափարի կերպավորման և նախագծման հարցում որոշակի նշանակություն ունեցած իրադարձություններին:
- Ներկայացնել Պողոս Նուբարի ղեկավարած՝ Ազգային և Ավետիս Ահարոնյանի ղեկավարած ՀՀ պատվիրակությունների՝ «միացյալ Հայաստանի» ստեղծման ուղղությամբ Փարիզի խաղաղության վեհաժողովում գործադրած ջանքերը և նախաձեռնությունները:
- Ցույց տալ Ազգային և ՀՀ պատվիրակությունների միջև տարաձայնությունների պատճառները և դրանց հաղթահարման փորձերը:
- Վերլուծել «միացյալ Հայաստանի» ստեղծման հարցում ամերիկյան և բրիտանական պետական շրջանակների ունեցած դերակատարությունը և համագործակցությունը հայ ղեկավարների հետ:
- Ներկայացնել և պարզաբանել 1918 թ. նոյեմբերի 21-ին խաղաղության վեհաժողովի համար բրիտանական ԱԳՆ-ի (Foreign Office) կողմից կազմված «Ասիական Թուրքիայի մասնատման» զեկուցագիրը, որում առաջարկներ էին արվում Օսմանյան կայսրության տրոհումից հետո ստեղծվող մի շարք նոր պետությունների, այդ թվում՝ նաև Հայաստանի սահմանների վերաբերյալ:
- Լուսաբանել 1918-1919 թթ. ընթացքում ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի կողմից ստեղծված ամերիկյան կառավարական փաստահավաք խմբի («The Inquiry»)՝ Հայաստանի պետության սահմանների վերաբերյալ կատարված ուսումնասիրությունները և առաջարկները:
- Վերլուծել ԱՄՆ-ի պատվիրակության կողմից խաղաղության վեհաժողովին ներկայացված «միացյալ Հայաստանի» նախագիծը, ինչպես նաև Քինգ-Քրեյնի և Հարբորդի հանձնաժողովների ուսումնասիրությունների արդյունքները:
- Կոնկրետ փաստական նյութերի հիման վրա քննական վերլուծության ենթարկել 1918-1920 թթ. «միացյալ Հայաստանի» ծրագրում կատարված առանցքային փոփոխությունները և լուսաբանել դրա ձախողման պատճառները:
- Կատարել եզրակացություններ խաղաղության վեհաժողովում և դրանից հետո «միացյալ Հայաստանի» վերաբերյալ ընդունված միջազգային փաստաթղթերի վերաբերյալ՝ մատնանշելով դրանց նշանակությունն ու արդիականությունը:

Ատենախոսության մեթոդաբանությունը: Ատենախոսությունը շարադրվել է արխիվային փաստաթղթերի, գիտական հրապարակումների, մենագրությունների, տարաբնույթ այլ արժեքավոր նյութերի և գրականության հետազոտության հիման վրա՝ վերլուծական-համադրական, պատմահամեմատական, պատմաքննական մեթոդների կիրառմամբ, որոնք ենթադրում են փաստական նյութի և պատմական իրադարձությունների բազմակողմանի քննական վերլուծություն՝ դրանից բխող համապատասխան եզրակացություններով:

Հետազոտության ժամանակագրական շրջանակները: Ատենախոսությունը ժամանակագրական առումով հիմնականում ընդգրկում է 1915-1920 թթ., սակայն

առանձին դեպքերում կատարվել են որոշ շեղումներ՝ իրադարձություններն ու դրանց առնչություններն առավել ամբողջական ներկայացնելու նպատակով:

Ատենախոսության գիտական նորույթը ու կիրառական նշանակությունը: Ատենախոսությունում փորձ է արվել ամբողջական ուսումնասիրության ենթարկել 1918-1919 թթ. ընթացքում մշակված Հայկական (Ազգային և ՀՀ) պատվիրակությունների, ԱՄՆ-ի կառավարական «The Inquiry» փաստահավաք խմբի և Մեծ Բրիտանիայի Արտաքին գործերի նախարարության՝ «միացյալ Հայաստանի» նախագծերը: Մեր կողմից ուսումնասիրության առարկա դարձած հիմնահարցը և այն ընդգրկող ժամանակահատվածը՝ 1915-1920 թթ., մինչ օրս հայ պատմագիտության մեջ ամբողջական և համակարգված հետազոտության չի ենթարկվել, չնայած ատենախոսության հետ կապված առանձին խնդիրներ որոշակիորեն ուսումնասիրված են:

Ատենախոսության մեջ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվել մեծ քանակությամբ արխիվային փաստաթղթեր, որոնք վերաբերում են քննարկվող ժամանակաշրջանում «միացյալ Հայաստանի» նախագծերի կազմման գործընթացում հայկական, ամերիկյան և բրիտանական կողմերի համագործակցությանը: Թեպետ խնդրո առարկա երեք նախագծերը միմյանց բավականին նման էին, սակայն ունեին նաև որոշակի տարբերություններ: Ատենախոսության մեջ ներկայացվում են այդ նախագծերի՝ տարածքային, պետական համակարգին և այլ խնդիրներին վերաբերող տարբերությունները, ինչպես նաև՝ դրանց զարգացումն ու ձևափոխումը: Փարիզի խաղաղության վեհաժողովի և նախագծերին առնչվող զարգացումների համատեքստում հանգամանալից կերպով լուսաբանվում են ինչպես Դաշնակիցների, այնպես էլ՝ Դաշնակից երկրների առանձին պետական գործիչների հանդես բերած նախաձեռնությունները և այն պատճառահետևանքային իրողություններն ու առնչությունները, որոնք հանգեցրեցին վեհաժողովում և դրանից անմիջապես հետո Հայկական հարցի հետ կապված հայտնի իրադարձություններին: Ատենախոսության վերջում (Հավելված բաժին) հայերեն թարգմանությամբ առաջին անգամ ներկայացվում են 1918 թ. բրիտանական և ամերիկյան պետական գերատեսչությունների կողմից պատրաստած երկու արժեքավոր արխիվային փաստաթղթեր, որոնք վերաբերում են «միացյալ Հայաստանի» բրիտանական և ամերիկյան նախագծերին:

Աշխատանքի մեջ լուսաբանվող խնդիրը, մեկնաբանություններն ու եզրահանգումները կարող են օգտագործվել Հայկական հարցին և Հայոց ցեղասպանությանը, ինչպես նաև խնդրո առարկա ժամանակահատվածում ՀՀ արտաքին քաղաքականությանը վերաբերող գիտական ձեռնարկներում և դասագրքերում: Աշխատանքը կարող է օգտակար լինել նաև Հայաստանի արտաքին քաղաքականությունն իրականացնող դիվանագիտական, քաղաքական գերատեսչությունների և գործիչների համար՝ ինչպես նրանց առօրյա գործունեության մեջ, այնպես էլ այդ գործունեության հեռանկարային հայեցակարգի մշակման խնդրում: Կարևոր է ընդգծել, որ ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան ևս տարբեր միջազգային փաստաթղթերի կնքումով Հայկական հարցի հանգուցալուծման վերաբերյալ ստանձնեցին անմիջական պատասխանատվություն: Ուստի, կարծում ենք, որ սույն

թեմայի լուսաբանումը, բացի հայկական շրջանակներից, կիետաքրքրի նաև ամերիկացի և բրիտանացի ուսումնասիրողներին ու քաղաքական գործիչներին, քանի որ ատենախոսությունում պարզաբանված խնդիրները նաև ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի արտաքին քաղաքականության պատմության անքակտելի մաս են կազմում:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ պատմության ֆակուլտետի Հայոց պատմության ամբիոնի կողմից: Ուսումնասիրության առանցքային դրույթներն արտացոլված են հեղինակի հրատարակված ինը հոդվածներում և 2018 թ. մայիսի 25-26-ին ՀՀ ԳԱԱ, ԵՊՀ և Սփյուռքի նախարարության կողմից կազմակերպված՝ ՀՀ հոչակման և Մայիսյան հերոսամարտերի 100-րդ տարեդարձին նվիրված միջազգային գիտաժողովում ընթերցած զեկույցում:

Ատենախոսության աղբյուրագիտական հենքը և հիմնախնդրի ուսումնասիրվածության աստիճանը: Ատենախոսության շարադրման ընթացքում օգտվել ենք Հայաստանի ազգային արխիվի տարբեր ֆոնդերից, որտեղ կան բազմաթիվ արժեքավոր փաստաթղթեր Ազգային և ՀՀ պատվիրակությունների գործունեության վերաբերյալ[4]: Ուսումնասիրվել և աշխատանքում լուսաբանվել են նաև թեմային վերաբերող՝ Միացյալ Թագավորության ազգային արխիվում պահվող նյութերը, որոնց շարքում կարևոր են հատկապես Առաջին աշխարհամարտի տարիներին և Փարիզի խաղաղության վեհաժողովին վերաբերող փաստաթղթերը[5]: Սկզբնաղբյուրների մեկ այլ խումբը կազմում են ԱՄՆ-ի ազգային արխիվում պահվող պետական փաստահավաք խմբի («The Inquiry») փաստաթղթերը, որոնց մի մասը սույն ատենախոսությամբ առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ[6]:

Ատենախոսությունը շարադրելիս օգտագործվել են նաև տպագիր փաստաթղթերի ժողովածուները, որոնցում տեղ են գտել «միացյալ Հայաստանին» վերաբերող

---

[4] Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 57, g. 5, գ. 21, գ. 33, գ. 94, գ. 153, գ. 169, գ. 215, գ. 226, ֆ. 113, g. 1, գ. 1, ֆ. 200, g. 1, գ. 33, գ. 5, գ. 35, գ. 142, գ. 270, գ. 274, գ. 282, գ. 290, գ. 328, գ. 351, գ. 355_1, գ. 431, գ. 448, գ. 480, g. 2, գ. 31, գ. 32, գ. 47, գ. 51, ֆ. 430, g. 1գ. 1322, գ. 1323, գ. 1325, գ. 1326, գ. 1327, գ. 1331, գ. 1333, գ. 1340, գ. 1349, գ. 1350, գ. 1351, գ. 1357, գ. 1366, ֆ. 450, g. 2, գ. 7, գ. 10, գ. 11, գ. 12, գ. 13, գ. 14, գ. 36, գ. 111, գ. 122:

[5] Տե՛ս The National Archives, London, UK, The Cabinet Papers, (CAB), CAB 23/21, CAB 23/35, CAB 24/1, CAB 24/4, CAB 24/68, CAB 24/72, CAB 24/145, Foreign Office (FO) Archives, FO 371/3657, FO 371/3658, FO 371/4141, FO 608/83/7442, FO 371/4142,FO 608/78/20367, FO 608/78/20832, FO 371/4143, FO 371/5042, FO 371/5043, FO 371/5087, FO 371/5088, FO 371/5089, FO 371/5090, FO 371/5091, War Office (WO) Archives, WO 106/1571, WO 106/349, 106/330/203, WO 106/64:

[6] Տե՛ս National Archives and Records Administration (NARA), Washington D.C., USA, Record Group (RG) 256 (Records of the American Commission to Negotiate Peace, The Inquiry), M1107 Roll 16, Roll 25, Roll 28, Roll 29, Roll 30, Roll 32, File No. 867B.00/55/60/71/108/120/131, 184.021/100/139/140 encls., 860J.01/167/174, 185.112/1, 867, sub. no. 75, 867, sub. no. 82, 185.5133/3, 867B.00/55/60/71/108/120/131, 867, sub. no. 363, 185.005/08, 867.01, sub. no. 73, 184.611/1457, 180.03801/1, sub. no. 8:

հայկական, ամերիկյան և բրիտանական նախագծերի փաստաթղթերը[7]: Այդ փաստաթղթերի քննությունը կատարվում է մի շարք գործիչների՝ Պ. Նուբարի, Ա.

---

[7] Տե՛ս Հայ Դատի նվիրյալը. Ֆրիտյոֆ Նանսեն: Փաստաթղթերի ժողովածու, Հայաստանի ազգային արխիվ, խմբ. Վիրաբյան Ա., կազմ. Հովսեփյան Է., Մարտիրոսյան Մ., Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 2005: Հուշամատեան Մեծ եղեռնի, խմբ. Ահարոնեան Գ., Պէյրութ, «Զարթօնք», 1965: Հայկական Հարցը Խաղաղութեան Ժողովին Առջեւ. Վիճակագրական նոր տեսութիւն մը ի նպաստ անկախ Հայաստանի, Բարսեղ Հ., Սարգիսեան Վ., խմբ., Պէյրութ, «Էրեբունի», 1987: Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբ. Գալոյան Գ., Ղազախեցյան Վ., Մելիքյան Վ., Միրզոյան, Ս., Վիրաբյան Ա., Երևան, «Գիտություն», 2000: Հայասպանութիւնը եւ Ամերիկեան Քոնկրէսը, խմբ. Թորիկեան Շ., Պէյրութ, «Համազգային», 1978: Լազեան Գ., Հայաստան եւ Հայ Դատը Ըստ Դաշնագրերու, Գահիրէ, «Յուսաբեր», 1942: Լազեան Գ. Հայաստան եւ Հայ Դատը (Վաւերագրեր), Գահիրէ, «Նոր Աստղ», 1946: Լեո, Հայկական հարցի վավերագրերը, խմբ. Է. Մինասյան, Երևան, ԵՊՀ հրատ., 2014: Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), խմբ. Կիրակոսյան, Ջ., Երևան, «Հայաստան», 1972: Դաշնակցական կառավարութեան դոկումենտներից I Ա. Ահարոնեանի զեկույց-նամակները, խմբ. ՀՍԽՀ Արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատ, Երևան, «Տպ. Ռազմ. Ժող. Կոմիսարիատ», 1922: Ազգային Պատուիրակութեան Գործունէութիւնը 1915-1916 (Վաւերագրեր), խմբ. Ղազարեան Վ., «Վահրամ Ապտալեան», 2015: Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը, և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), (երկհատորյակ), խմբ. Պեյլերյան, Ա., Երևան, «Հայաստան», 2005: Դեպի Հայաստան. Ամերիկյան զինվորական առաքելության զեկույցը, խմբ. Սիմոնյան Ա. Հ., Ղարիբյան Ա. Ա., խմբ., Երևան, ԵՊՀ հրատ., 2014: *The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915-1916: Documents presented to Viscount Grey of Fallodon*, Bryce J., ed., London, Hodder and Stoughton, 1916: Little E. C., *The Armenian Question in the American House of Representatives: A Speech by the Hon. Lieut.-Colonel Edward C. Little of Kansas, delivered on Thursday, February 7th, 1918, reprinted from the "Congressional Review" of March 4th, 1918*, The Frederick Printing Company Ltd., London, 1918: *Memorandum on the Armenian Question*, Armenian National Delegation, Waterlow Brothers and Layton, London, 1918: *The Armenian Question Before the Peace Conference: A Memorandum Presented Officially by the Representatives of Armenia to the Peace Conference at Versailles, on February 26th, 1919* (signed by Avetis Aharonian and Boghos Nubar), The Armenian National Union of America, ed., New York, Press Bureau, 1919: *The Case of Armenia*, New York, The Armenian National Union of America, 1919: *Memorandum of the Sublime Porte Communicated to the American, British, French and Italian High Commissioners on the 12th February 1919* Sublime Porte, Zellich Brothers, Constantinople, 1919: *Source Records of the Great War*, Vol. VII, Horne C. F., ed., New York, National Alumni, 1923: *Arbitral Award of the President of the United States of America Woodrow Wilson: Full Report of the Committee Upon the Arbitration of the Boundary Between Turkey and Armenia, Washington, Nov. 22, 1920*, Papian A., ed., Yerevan, Modus Vivendi, 2011: *The Armistices of 1918*, Maurice F., ed., London, New York, Toronto, Oxford University Press, 1943: *A Memorandum on the Armenian Question: Presented to the Council of Ministers, March 7, 1947*, New York, Armenian National Council of America, 1947: Great Britain Parliamentary Debates (GB PD), Fifth Series, Vols. 32, 69, 108, 110, London, Hansard, 1918-1920: Foreign Relations of the United States (FRUS), The World War 1917, Vol. I, Suplement 2, Washington, Government Printing Office (GPO), 1922: FRUS, *The Paris Peace Conference, 1919*, Vols. I-XII, Washington, GPO, 1934-1947: *The Republic of Armenia: A Memorandum on the Recognition of the Government of the Republic of Armenia, submitted by the Special Mission of the Republic of Armenia to*

Ահարոնյանի, Ա. Խատիսյանի, Ս. Վրացյանի, Դ. Հ. Միլերի, Ֆ. Նանսենի, Հ. Հուվերի, Է. Հաուզի, Ռ. Լանսինգի, Վ. Վեստերմանի, Ջ. Հարբորդի, Դ. Լ. Ջորջի, Ա. Թոյնբիի, Ք. Կարաբեքիրի և այլոց հրատարակությունների (հուշագրեր, հոդվածներ, նամակներ, օրագրեր և այլն) լուսաբանման հետ համատեղ[8], որոնք նույնպես պատշաճ կերպով

---

the United States, Presented by Mr. Lodge, November 10, 1919, Washington, GPO, 1919: Harbord J. G., *Conditions in the Near East: Report of the American Military Mission to Armenia, Presented by Mr. Lodge, April 13, 1920*, 66th Congress 2nd Session, Senate, Doc. No. 266, Washington, GPO, 1920: Harbord J. G., "Investigating Turkey and Trans-Caucasia," in *The World's Work*, vol. XL, Garden City, Doubleday, Page & Co., 1920: *Armenia in the Documents of the U.S. Department: 1917-1920*, Makhmourian G., ed., Yerevan, NAS RA, 2017: Link A. S. and Little, J. E. eds., *The Papers of Woodrow Wilson, Vol. 63, September-November 5, 1919,* "Wilson speech at Salt Lake City, 23 Sept. 1919," Princeton, Princeton University Press, 1990: *The Treaties of Peace, 1919-1923*, 2 vols., Martin L., ed., New York, Carnegie Endowment for International Peace, 1924: Morrison E. E. ed., *The Letters of Theodore Roosevelt, Vol. 8*, Cambridge, Harvard University Press, 1954: Moseley, G. V. H., *Mandatory Over Armenia: Report Made to Maj. Gen. James G. Harbord, United States Army, Chief of the American Military Mission, on the Military Problem of a Mandatory over Armenia*, Washington, GPO, 1920: *Documents on British Foreign Policy 1919-1939, First Series*, eds. Woodward E. L., Butler R., Orde A., Bury J. P. T., vol. III, London, His Majesty's Stationery Office, 1949; vol. IV, 1972; vol. VII 1954, vol. VIII, 1958: Раздел Азиатской Турции: по секретным документам б. Министерства иностранных дел, Адамов Е. А., Москва, «Литиздат НКИД», 1924: Политбюро ЦК РКП(б) - ВКП(б). Повестки дня заседаний. 1919-1952. Каталог, т. 1, Адибеков Г. М., Андерсон К. М., Москва, «Российская политическая энциклопедия», 2000: Из истории иностранной интервенции в Армении в 1918 г. (документы и материалы), Бадалян Х. А., Арутюнян А. О., Ереван, ЕГУ, 1970:

[8] Տե՛ս Ահարոնյան Ա., Սարդարապատից մինչև Սևր և Լոզան: Քաղաքական Օրագիր (1919-1927), Երևան, ԵՊՀ հրատ., 2001: Լեո, Անցյալից. փաստաթղթեր, դատումներ, Թիֆլիս, «Խորհրդային Կովկաս», 1924: Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէյրութ, «Համազգային», 1968: Նանսեն Ֆ., Խաբված ժողովուրդ, թարգմ. Մակարյան Է., խմբ. Ա. Գ. Մադոյան, Երևան, «Գասպրինտ», 2004: Պոլտուին Օ., Վեց բանտ և երկու յեղափոխութիւն, թարգմ. Ստեփանեան Շ. Ա., Աղեքսանդրիա, Ա. Ստեփանեան հրատ., 1933: Սասունի Կ., Հայ-թրքական պատերազմը (1920-ին), Պէյրութ, «Համազգային», 1969: Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Փարիզ, հրատ. Հ.Յ.Դ. Ամերիկայի Կ.Կ.-ի, 1928: Barton J. L., *Story of the Near East Relief (1915-1930) An Interpretation*, New York, Macmillan, 1930: Bonsal S., *Suitors and Suppliants: The Little Nations at Versailles*, New York, Simon Publications, 1946: Callwell C. E., *Field-Marshal Sir Henry Wilson: His Life and Diaries, Vol. II*, London, Toronto, Melbourne and Sydney, Cassell and Co. Ltd., 1927: Harbord J. G., "Investigating Turkey and Trans-Caucasia,""Mustapha Kemal Pasha and His Party," in *The World's Work*, vol. XL, Garden City, Doubleday, Page & Co., May-June 1920: Lansing R., *The Peace Negotiations: A Personal Narrative*, Boston and New York, Houghton Mifflin Company, Boston and New York, 1921: Lloyd George D., *War Memoirs of David Lloyd George: 1917*, Boston, Vol. III, Little, Brown, and Company, 1934: George D. L., *Memoirs of the Peace Conference*, 2 volumes, New Haven, Yale University Press, 1939: Hoover H., *The Memoirs of Herbert Hoover: Years of Adventury 1874-1920*, New York, Macmillan, 1951: Karabekir K., *İstiklal Harbimiz*, Istanbul, Türkiye Yayinevi, 1960: Karabekir K., *Istiklâl Harbimiz Enver Paşa ve 'Ittihat-Terakki erkâni*, Istanbul, Türkiye Yayinevi, 1969: Kerr S., *The Lions of Marash: Personal Experiences with American Near East Relief, 1919–1922*, New York, SUNY Press, 1973: Miller D. H., *My Diary at the Conference of Paris, with Documents,* vol. 4, Documents 216-304, New York, Appeal Printing Company, 1924:

օգտագործվել են: Վերոնշյալ գործիչներից շատերն անմիջական առնչություն են ունեցել այդ փաստաթղթերի կազմման և վավերացման գործընթացին՝ հայկական, ամերիկյան և բրիտանական պատվիրակությունների կազմում մասնակցելով նաև խաղաղության վեհաժողովի աշխատանքներին: Աղբյուրագիտական հենքի կարևոր բաղկացուցիչներից են նաև նրանց, մասնավորապես Դ. Լոյդ Ջորջի, Վ. Վիլսոնի, Թ. Ռուզվելտի, Վ. Քարտաշյանի և Մ. Քեմալի՝ խնդրո առարկա թեմային և ժամանակաշրջանին վերաբերող ելույթները, հայտարարություններն ու քաղաքական բովանդակություն ունեցող հոդվածները[9]:

Օգտագործվել են նաև տվյալ ժամանակի՝ հայկական, ամերիկյան և բրիտանական պարբերականներում տեղ գտած համապատասխան նյութերը: «Միացյալ Հայաստանի» շուրջ Ազգային և ՀՀ պատվիրակությունների միջև առկա տարաձայնությունների վերաբերյալ ընդարձակ հրապարակումներ կան, մասնավորապես, «Հայաստան», «Հայրենիք», «Կոչնակ Հայաստանի» և «Վերածնունդ» պարբերականներում[10]: Թեմայի ուսումնասիրության վերաբերյալ արժեքավոր հրապարակումներ են արվել անգլալեզու՝ «The New York Times», «The New Armenia», «Christian Science Monitor», «Editor and Publisher Co.», «The Times» և «The Manchester Guardian» պարբերականներում[11]:

«Միացյալ Հայաստանի» ամերիկյան նախագծի առնչությամբ կարևոր հարցադրումներ և պարզաբանումներ են ի հայտ են եկել ինչպես հայ, այնպես էլ՝ օտար հեղինակների աշխատություններում: Մեր կողմից ուսումնասիրության առարկա դարձած թեմայի տեսանկյունից արժեքավոր ենք համարում հատկապես Գ.

Rawlinson A., *Adventures in the Near East: 1918-1922*, London and New York, Andrew Melrose, 1923: Tengirşenk Y. K., *Vatan Hizmetinde*, Ankara, Kültür Bakanliği Yayinlari, 1981: Tumulty J. P., *Woodrow Wilson as I Know Him*, Garden City, NY, Doubleday, Page, 1921: *What Really Happened At Paris: The Story of the Peace Conference 1918-1919, By American Delegates*, House E. M., Seymour C., eds., New York, Charles Scribner's Sons, 1921: *The Intimate Papers of Colonel House: Into the World War*, Seymour C., ed., Boston and New York, The Houghton Mifflin Company, 1928:

[9] George D. L., *British War Aims Statement, January 5, 1918*, London, R. Clay and Sons, 1918: Baker R. S., Dodd W. E., eds*., War and Peace: Presidential Messages, Addresses, And Public Papers 1917-1924, Vol. 2, The Public Papers of Woodrow Wilson*, "Speech at Kansas City, September 6, 1919," New York, Harper and Brothers, 1927: Wilson W., *The hope of the world; messages and addresses delivered by the President between July 10, 1919, and December 9, 1919, including selections from his country-wide speeches in behalf of the Treaty and Covenant*, New York, Harper, 1920: *Woodrow Wilson: The Essential Political Writings*, Pestritto R. J., ed., Lanham, Boulder, New York, Toronto, Oxford, Lexington Books, 2005: *The Letters of Theodore Roosevelt, Vol. 8*, Morrison E. E. ed., Cambridge, Harvard University Press, 1954: *Vahan Cardashian: Advocate Extraordinaire for the Armenian Cause*, Yeghiayan V. ed., Center for Armenian Remembrance, 2008: Кемаль Ататюрк, Избранные речи и выступления, ред. Миллер А. Ф., Москва, «Прогресс», 1966:

[10] Տե՛ս «Հայաստան», Փարիզ, 1919-1920 թթ.: «Հայրենիք», Բոստոն, 1919 թ.: «Կոչնակ Հայաստանի», Նյու Յորք, 1919 թ.: «Վերածնունդ», Փարիզ, 1917-1919 թթ.:

[11] *The New York Times*, New York, 1919-1927: *The New Armenia*, New York, 1917-1927: *Christian Science Monitor*, Boston, 1919: *Editor and Publisher Co*., New York, 1922: *The Times of the Armenian Genocide: Reports in the British Press, 2 vols: vol. 1 1914-1918; vol. 2 1920-1923*, ed. Peltekian K. M., Beirut, Four Roads, 2013:

Մախմուրյանի ուսումնասիրությունները[12]: Քննարկվող հիմնահարցի տեսանկյունից արժևորվում են նաև Ռ. Աֆթանդիլյանի, Ջ. Գիդնիի, Է. Գելֆանդի, Ջ. Գրաբիլի, Ջ. Դենովոյի, Լ. Էվանսի, Հ. Հովարդի, Ռ. Հովհաննիսյանի, Ս. Փայասլյանի, Ռ. Քուլաքյանի մենագրությունները[13]: Չնայած վերոնշյալ հեղինակների կողմից սույն թեմային վերաբերող մի շարք հարցերի վերաբերյալ կատարված արժեքավոր պարզաբանումներին, այնուհանդերձ կան նաև հարցեր, որոնք դեռևս բավականաչափ չեն ուսումնասիրվել, և սույն ատենախոսությունը լրացնում է այդ բացը: Խոսքը վերաբերում է, օրինակ, նաև 1918-1919 թթ. «միացյալ Հայաստանի» ամերիկյան նախագծի ձևավորման և այդ ուղղությամբ «The Inquiry»-ի իրականացրած աշխատանքների քննական լուսաբանմանը: Ինչպես նշվեց, վերոնշյալ նախագիծը հիմնականում ձևավորվեց 1918 թ. The Inquiry-ի մաս կազմող՝ Է. Սեմպլի, Վ. Վեստերմանի, Դ. Միլերի և մյուս մասնագետների զեկուցագրերի հիման վրա, որոնցից շատերն, ի դեպ, ընդգրկվեցին Վիլսոնի ղեկավարած խաղաղության վեհաժողովի ամերիկյան պատվիրակության կազմի մեջ և «միացյալ Հայաստանի» նախագծի իրենց առաջարկները ներկայացրեցին վեհաժողովին: Նրանց, ինչպես և «The Inquiry»-ի՝ իրենց մյուս գործընկերների առայսօր չլուսաբանված՝ 1918 թ. զեկուցագրերը և այլ արխիվային փաստաթղթեր, որոնք սույն ատենախոսությունում ամբողջական քննական պարզաբանում են ստացել, օգնում են՝ ավելի ստույգ ընկալելու և արժևորելու 1919 թ. ամերիկյան պատվիրակության կողմից «միացյալ Հայաստանի» վերաբերյալ Փարիզում արված առաջարկների հիմնավորումները:

Վիլսոնի կողմից առաջարկված՝ «միացյալ Հայաստանի» նախագծի հիմունքներն առավել ստույգ և ամբողջականորեն գնահատելու համար, անկասկած, անհրաժեշտ է

---

[12] Махмурян Г., Армения в Политике США 1917-1923 гг., Ереван, Институт истории НАН РА, 2018: Նույնի «Армения и ее территориальный вопрос на Парижской мирной конференции (18 января - 28 июня 1919 г.)», Историко-филологический журнал, Ереван, 2018, № 3 (209):

[13] Ованнисян, Р. Г., Международные отношения Республики Армения, 1918-1920 гг., пер. с англ. Г. Г. Махмурян, Ереван, «НАН РА, Институт Истории», 2007: Aftandilian G. L., *Armenia, Vision of a Republic: The Independence Lobby in America 1918-1927*, Boston, Charles River Books, 1981: Evans L., *United States Policy and the Partition of Turkey, 1914-1924*, Baltimore, The Johns Hopkins Press, 1965: DeNovo J. A., *American Interests and Policies in the Middle East, 1900-1939*, Minneapolis, The University of Minnesota Press, 1963: Gidney J. B., *A Mandate for Armenia,* Kent, Ohio, Kent State University Press, 1967: Gelfand E. L., *The Inquiry: American Preparations for Peace, 1917-1919*, New Haven and London, Yale University Press, 1963: Grabill J., *Protestant Diplomacy and the Near East: Missionary Influence on American Policy, 1810-1927*, Minneapolis, University of Minnesota Press, 1971: Koolakian R. G., *Struggle for Justice: A Story of the American Committee for the Independence of Armenia, 1915-1920*, Dearborn, Michigan, Armenian Research Center, University of Michigan, 2008: Hovannisian R. G., *The Republic of Armenia. Vols. I-IV,* Berkeley, Los Angeles and London, University of California Press, 1971, 1982, 1996: Howard H., *The King-Crane Commission: An American Inquiry in the Middle East*, Beirut, Khayats, 1963: Makhmourian G., "The Harbord Mission Reports on Armenia, 1919 in the U.S. Department of State Archives," Fundamental Armenology, No. 2, 2015: Payaslian S., *The United States Policy Towards the Armenian Question and the Armenian Genocide*, New York, Palgrave Macmillan, 2005:

նաև ուսումնասիրել նրա վարած արտաքին քաղաքականությունը, ինչպես և վերլուծել ԱՄՆ-ում այդ քաղաքականության հակառակորդ հանրապետականների ընդդիմության դրդապատճառները: Այդ խնդիրների լուսաբանման ժամանակ հանգամանալից քննական անդրադարձ է կատարվում Լ. Ամբրոսիուսի, Ա. Հեքշերի, Ռ. Բեյքերի, Ֆ. Բրեխերի, Ֆ. Լինչի, Ա. Լինքի, Մ. Օրենի, Ա. Պատրիկի, Ջ. Վինթերի և այլոց ուսումնասիրություններին ու դրանց արդյունքներին[14]:

Մեր ուսումնասիրության մաս կազմող մեկ այլ հարցի՝ «միացյալ Հայաստանի» բրիտանական նախագծի վերաբերյալ կարևոր վերլուծություններ են արվել Ա. Արսլանյանի, Ա. Թոյնբիի, Գ. Մախմուրյանի, Ժ. Միսաքյանի, Ա. Նասիբյանի, Հ. Նիկոլսոնի, Ջ. Ֆիշերի մենագրություններում[15]: Խաղաղության վեհաժողովում ներկայացված այդ նախագծին առնչվող հարցերն առավել ստույգ պարզաբանելու համար, այնուհանդերձ, նախընտրելի է համարվել ատենախոսությունում այն քննության ենթարկել 1918 թ. նոյեմբերի 21-ին Օսմանյան կայսրության տրոհման վերաբերյալ Մեծ Բրիտանիայի ԱԳՆ-ի կողմից պատրաստված հատուկ հուշագրի հետ առնչությունների համատեքստում[16], ինչը նոր բացահայտումների և եզրակացությունների ամբողջացման հնարավորություն է ընձեռում:

---

[14] Ambrosius L. E., *Woodrow Wilson and American Internationalism*, Cambridge, Cambridge University Press, 2017: Heckscher A., *Woodrow Wilson*, New York, Scribner, 1991: Baker R. S., *Woodrow Wilson and the World Settlement,* Vol. 2, Garden City, Doubleday, Page and Co., 1923: Brecher F. W., "Woodrow Wilson and the Origins of the Arab-Israeli Conflict" in American Jewish Archives Journal, 39 (1), Cincinatti, 1987: Link A. S., *Woodrow Wilson and the Progressive Era, 1910–1917*, New York, Harper Torchbooks, 1972: Lynch F., *President Wilson and The Moral Aims of the War*, New York and Chicago, Flemin H. Revell Company, 1918, Oren M. B., *Power, Faith, and Fantasy: America in the Middle East 1776 to the Present*, New York, W. W. Norton and Company, 2008: Patrick A., America's *Forgotten Middle East Initiative: The King-Crane Commission of 1919*, New York, I. B. Tauris, 2015: *America and the Armenian Genocide of 1915*, Winter J., ed., Cambridge, Cambridge University Press, 2003: Wright Q., *Mandates Under the League of Nations*, Chicago, The University of Chicago Press, 1930: Peterson M. D., *"Starving Armenians": America and the Armenian Genocide, 1915-1930 and After*, Charlottesville and London, University of Virginia Press, 2004:

[15] Arslanian A. H., "British Wartime Pledges, 1917-18: The Armenian Case," *Journal of Contemporary History*, Vol. 13, No. 3, July, 1978, Sage Publications, New York: Fisher J., *Curzon and British Imperialism in the Middle East, 1916-1919*, London, Portland, Frank Cass, 1999: Махмурян Г., Политика Великобритании в Армении и Закавказьев 1918-1920 гг.: Бремя белого человека, Ереван, «Лусакн», 2002: Missakian J., *A Searchlight on the Armenian Question: 1878-1950*, Boston, Hairenik Publishing, 1950: Nassibian A., *Britain and the Armenian Question, 1915-1923*, London, Croom Helm, 1984: Nicolson H., *Curzon: The Last Phase, 1919-1925,* London, Constable, 1937: Toynbee A. J., *Turkey: A Past and a Future*, London, Hodder and Stoughton, 1917: Toynbee A. J., Kirkwood K. P., *Turkey*, New York, Scribner, 1927: Laderman C., *Sharing the Burden: The Armenian Question, Humanitarian Intervention, and Anglo-American Visions of Global Order*, Oxford, Oxford University Press, 2019:

[16] Տե՛ս CAB 24/72, Foreign Office, Political Intelligence Department, Special I, Memorandum Respecting the Settlement of Turkey and the Arabian Peninsula:

Խաղաղության վեհաժողովում Դաշնակիցների մրցակցության, մասնավորապես միացյալ Հայաստանի՝ անգլո-ամերիկյան նախագծերի դեմ Ֆրանսիայի ընդդիմության լուսաբանման առումով առանձնապես արժեքավոր են Գ. Մախմուրյանի, Ա. Եսայանի, Է. Զոհրաբյանի, Շ. Թորոսյանի, Փ. Հելմրայքի, Ռ. Սահակյանի, Գ. Կրեգի, Ֆ. Գիլբերտի, Դ. Ֆրոմկինի և այլոց աշխատությունները[17]:

Քննարկվող հիմնահարցի տեսանկյունից կարևոր են նաև Յ. Բարսեղովի, Շ. Թորիկյանի, Ա. Մելքոնյանի, Ա. Մարուքյանի, Ա. Պապյանի, Զ. Մսըրլյանի, Վ. Վարդանյանի աշխատությունները[18]: Նշված հեղինակները կատարում են մի շարք արժեքավոր վերլուծություններ և դրանցից բխող եզրահանգումներ, որոնք անմիջականորեն առնչվում են 1919-1920 թթ. Պ. Նուբարի և Ա. Ահարոնյանի «միացյալ Հայաստանի» պատվիրակությունների իրավական ձեռքբերումներին: Այդ առումով լիովին կիսում ենք վերոնշյալ հեղինակների աշխատություններում տեղ գտած այն թեզը, որ Վիլսոնի իրավարար վճռով ամրագրված «միացյալ Հայաստանի» պահանջատիրությունը պետք է, անտարակույս, կազմի Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման դեմ ուղղված աշխատանքների բաղադրիչ մաս:

Քննարկվող հիմնահարցի տեսանկյունից զգալի հետաքրքրություն են ներկայացնում նաև թուրք պատմաբաններ Հ. Աքմեշեի, Է. Մյութերչիմլերի, Մ. Փերինչեքի, Թ. Սորգունի և Ն. Քրիսի աշխատությունները, ընդորում՝ Մյութերչիմլերի,

---

[17] Զոհրաբյան Է., 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, «Ոսկան Երևանցի», 1997: Махмурян Г., Лига наций, армянский вопрос и Республика Армения, Ереван, «Арта́грс», 1999: Եսայան Ա. Ա., «Հայկական հարցը» և միջազգային դիվանագիտությունը, Երևան, ԵՊՀ հրատ., 1965: Թորոսյան Շ. Թ., Կիլիկիայի հայերի ազգային-ազատագրական շարժումները 1919-1920 թթ., Երևան, ԵՊՀ հրատ., 1987: Սահակյան Ռ. Գ., Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921 թթ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1970: Craig G. A., and Gilbert F., eds., *The Diplomats: 1919-1939* Princeton, Princeton University Press, 1953: Fromkin D., *A Peace to End All Peace: The Fall of the Ottoman Empire and the Creation of the Modern Middle East*, New York, Henry Holt and Co., 1989: Helmreich P. C., *From Paris to Sèvres: The Partition of the Ottoman Empire at the Peace Conference of 1919-1920*, Columbus, Ohio State University Press, 1974: Karsh E., *Empires of the Sand: The Struggle for Mastery in the Middle East*, Cambridge, Harvard University Press, 2001: Morris B., Ze'evi D., *The Thirty-Year Genocide: Turkey's Destruction of its Christian Minorities, 1894-1924*, Cambridge, Harvard University Press, 2019: Sicker M., *The Middle East in the Twentieth Century*, Westport, Conn., Praeger, 2001:

[18] Барсегов Ю. Г., Геноцид Армян. Ответственность Турции и Обязательства мирового сообщества, т. 2, часть 2, Москва, «Гардарики», 2005: Թորիկեան Շ., Հայկական հարցը եւ միջազգային օրէնքը, Պէյրութ, «Համազգային», 1976: Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնադրումները, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 2014: Մելքոնյան Ա., Ցեղասպանություն և հայրենազրկում, Ճանաչումից՝ հատուցում, Երևան, «Զանգակ», 2015: Մսըրլեան Զ., Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արտաքին քաղաքականութիւնը և Հայկական հարցը (1900-2009), Պէյրութ, «Սիփան», 2010: Պապյան Ա., Հայրենատիրություն. Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները և հարակից հարցեր (հոդվածների ժողովածու), Երևան, «Ասողիկ», 2012: Վարդանյան Վ., Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և հետևանքների վերացման իրավական հիմնախնդիրները, Երևան, ԵՊՀ հրատ., 2017:

Փերինչեքի և Սորգունի մենագրությունները բնութագրվում են ընդգծված կողմնակալությամբ, ինչը բնորոշ է բազմաթիվ թուրք հեղինակներին: Տվյալ հեղինակները ներկայացնում են թուրքական պատմագրության այն թեզը, թե միացյալ Հայաստանի գաղափարի թիկունքում կանգնած էին անգլո-ամերիկյան «կայսերապաշտները»[19]: Ըստ այդմ՝ ամբողջովին անտեսվում է այն փաստը, որ ազատ և «միացյալ Հայաստանի» ստեղծումը, նախ և առաջ, արտացոլում էր հայ ժողովրդի դարավոր նպատակներն ու բաղձանքները: Լոնդոնում լույս տեսած՝ Աքմեշեի աշխատությունն այդ առումով համեմատաբար անաչառ է[20]: Թուրք ազգայնական շարժման երիտթուրքական ծագման վերաբերյալ կարևոր ուսումնասիրություն է կատարել Ն. Քրիսը[21]: Այս հարցի լուսաբանումը տեղ է գտել նաև հայ և օտարազգի մի շարք այլ հեղինակների աշխատություններում: Այդ առումով ուզում ենք առանձնացնել թուրքագետ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռ. Սաֆրաստյանի՝ վերջերս լույս տեսած արժեքավոր մենագրությունը[22]: Սաֆրաստյանը կարևոր անդրադարձ է կատարում 1919-1920 թթ. Քեմալի դիվանագիտական և ռազմական քայլերին, որոնք միտված էին՝ խափանելու «միացյալ Հայաստանի» ստեղծումը: Լիովին կիսում ենք հեղինակի այն տեսակետը, որ վերջինիս գործունեությունը ուղղված էր ոչ միայն «միացյալ Հայաստանի», այլև, առհասարակ, հայ ժողովրդի և հայոց պետականության դեմ: Փաստերը ցույց են տալիս, որ Քեմալը չէր կարող հասնել լուրջ հաջողությունների՝ առանց արտաքին ուժերի օժանդակության, և այդ առումով էական նշանակություն ունեցավ քեմալա-բոլշևիկյան համագործակցությունը: Սույն խնդրի լուսաբանմանն անդրադարձել են Լ. Խուրշուդյանը, Հ. Սիմոնյանը, Գ. Լազյանն, Ա. Եսայանն, Ա. Հարությունյանն, Ե. Սարգսյանը, Հ. Կապուրը, Ն. Մըքմիկինը, Ք. Յուդինը, Ռ. Նորթը և այլք[23]:

---

[19] Mütercimler E., *Kurtuluş Savaşina Denizden Gelen Destek. Sovyetler Birliğinden Alinan Yardimlar. Kuva-yi Milliye Donanmasi*, Istanbul, Yaprak Yayinlari, 1992: Perinçek M., *Atatürk'ün Sovyetler'le Görüşmeleri; Sovyet Arşiv Belgeleriyle*, Istanbul, Kaynak Yayinlari, 2005: Sorgun T., *Halil Paşa; İttahatve Terakki'den Cumhuriyet'e Bitmeyen Savaş*, Istanbul, Kamer, 1997:

[20] Akmeşe H. N., *The Birth of Modern Turkey: The Ottoman Military and the March to World I*, London, I. B. Tauris, 2005:

[21] Criss N. B., *Instanbul Under Allied Occupation, 1918-1923*, Leiden, Brill, 1999:

[22] Սաֆրաստյան Ռ., Մուստաֆա Քեմալ. Պայքար Հայաստանի Հանրապետության դեմ (1919-1921 թթ.), Երևան, «Տիր», 2019:

[23] Եսայան Ա. Ա., խմբ. Կիրակոսյան Ջ. Ս., Հայաստանի միջազգային-իրավական դրությունը (1920-1922 թթ.), Երևան, ԵՊՀ հրատ., 1967: Խուրշուդյան Լ., Հայկական հարցը, Երևան, «Համազգային», 1995: Լազեան Գ., Հայաստան եւ հայ դատը: Հայ և ռուս յարաբերութիւններու լոյսին տակ, Երևան, «Ադանա», 1991: Հարությունյան Ա., Սևրի պայմանագիրը և հայ հասարակական-քաղաքական միտքը, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 2004: Սահակյան Տ., Հայաստանի դեմ 1920 թ. կատարված ռուս-թուրք-ադրբեջանական զինված ագրեսիայի սնուցող արմատները, Երևան, «Լուսակն», 2016: Սարգսյան Ե., Դավադիր գործարք. Հայաստան-Ռուսաստան-Թուրքիա, «Հայաստան», Երևան, 1994: Սիմոնյան Հ., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարախոսությունը և քաղաքականությունը, Երևան, «Հայաստան», 1986: Սարգսյան Ե., Սահակյան Ռ., Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք

Ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից, օգտագործված աղբյուրներից, գրականության ցանկից և հավելվածից: Հավելվածում տեղ են գտել անգլերեն բնագրի հայերեն թարգմանությամբ ամերիկյան և բրիտանական երկու արխիվային փաստաթղթեր:

Ներածությունում հիմնավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը, ձևակերպված են հետազոտության նպատակը և խնդիրները, տրված է թեմային վերաբերող՝ օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության տեսությունը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. «ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՄԱՐ»: Այն բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում, որը կրում է «Հայոց ազգային պատվիրակության գործունեությունն Առաջին աշխարհամարտի տարիներին և միացյալ Հայաստանի իրագործման առաջին քայլերը Մուդրոսի զինադադարից հետո» վերնագիրը, համառոտ անդրադարձ է կատարվում Առաջին աշխարհամարտի տարիներին Պողոս Նուբարի գլխավորած Հայոց ազգային պատվիրակության՝ պատերազմի ավարտից հետո Դաշնակիցների հովանու ներքո Արևմտյան Հայաստանում ինքնավարություն հաստատելու ջանքերին:

Երկրորդ՝ «Հայկական զույգ պատվիրակությունները Փարիզի խաղաղության վեհաժողովում» ենթագլխում ներկայացված են Ազգային և ՀՀ պատվիրակությունների առաջին քայլերը Փարիզի խաղաղության վեհաժողովի համատեքստում: Քննության են առնված Ազգային պատվիրակության և ՀՀ կառավարության «միացյալ Հայաստան»-ի շուրջ առկա տարաձայնությունները և դրանց հաղթահարման փորձերը:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. «ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ»: Այն լուսաբանում է Հայկական հարցը Մեծ Բրիտանիայի արտաքին քաղաքականության մեջ Առաջին աշխարհամարտի տարիներին և Մուդրոսի զինադադարի կնքումից հետո: 1918 թ. նոյեմբերի 21-ին Մեծ Բրիտանիայի

պատմագիտության մեջ, Հայաստանի պետ. հրատ., Երևան, 1963: Kapur H., *Soviet Russia and Asia, 1917-1927, A Study of Soviet Policy Towards Turkey, Iran and Afghanistan*, New York, Humanities Press, 1967: Lewis B., *The Emergence of Modern Turkey*, Oxford, Oxford University Press, 1961: Eudin X. J., North R. C., *Soviet Russia and the East, 1920-1927: A Documentary Survey*, Stanford, Stanford University Press, 1957: Robinson R. D., *The First Turkish Republic: A Case Study in National Development*, Cambridge, Harvard University Press, 1963: Smith E. D., *Turkey: Origins of the Kemalist Movement and the Government of the Grand National Assembly (1919—1923)*, Washington, D.C., Judd and Detweiler, 1959: Kazemzadeh F., *The Struggle for Transcaucasia: 1917-1921*, New York, Philosophical Library, 1951: Thompson J. M., *Russia, Bolshevism, and the Versaille Peace*, Princeton, Princeton University Press, 1967: Slusser R. M., Triska J. F., *A Calendar of Soviet Treaties, 1917–1957*, Stanford, Stanford University Press, 1959: Саркисян Е., Турецкая агрессия в Армении осенью 1920 года и позиция Советской России, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատ. 10, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1979: Хейфец А. Н., Советская Россия и сопредельные страны Востока в годы гражданской войны (1918-1920), Москва, «Наука», 1964:

արտգործնախարարությունը կազմեց մի հուշագիր, ըստ որի՝ Օսմանյան կայսրության տրոհմամբ պետք է ստեղծվեր «միացյալ Հայաստան», որն իր կազմում ընդգրկելու էր Արևելյան Հայաստանը, ինչպես նաև՝ Արևմտյան Հայաստանի վեց նահանգները, Տրապիզոնի նահանգի մի մասը և Կիլիկիան: Հատկանշական է, որ հուշագրում նշվում էր, որ թեև բրիտանական կառավարությունը պաշտպանելու էր սույն նախագիծը խաղաղության վեհաժողովում, այն, սակայն, չէր ստանձնելու անմիջական պատասխանատվություն դրա իրագործման համար՝ թողնելով դա Միացյալ Նահանգներին կամ Ֆրանսիային: Մեծ Բրիտանիայի ԱԳՆ-ի վերոնշյալ հուշագիրը 1919 թ. փետրվարին բրիտանական պատվիրակության կողմից ներկայացվեց խաղաղության վեհաժողովին:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ. «ԱՄՆ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՓԱՐԻԶԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ»: Այն բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում, որը վերնագրված է՝ «Հայ-ամերիկյան հարաբերությունների նախընթաց զարգացումները (19-րդ դ. երկրորդ կես - 20-րդ դ. սկիզբ)», ամփոփ կերպով ներկայացվում են ամերիկացի միսիոներների՝ Արևմտյան Հայաստանի ու Օսմանյան կայսրության այլ հայաբնակ վայրերում ծավալված գործունեության արդյունքում 19-րդ դարում ձևավորված հայ-ամերիկյան հարաբերությունները, որոնց հիման վրա էլ Առաջին աշխարհամարտի տարիներին և հետայդու զարգացավ երկու կողմերի համագործակցությունը: Պատերազմի տարիներին Հայկական հարցով զբաղվող ամերիկահայ տարբեր կազմակերպություններ սկսեցին համագործակցել Միացյալ Նահանգների պետական գերատեսչությունների և քաղաքական գործիչների հետ: Ինչպես նշվեց, «Միացյալ Հայաստանի» ամերիկյան նախագիծը սկսեց մշակվել պատերազմի ավարտից առաջ, և այս հարցով զբաղվում էր Վիլսոնի վարչակազմին առընթեր գործող՝ «The Inquiry» պետական փաստահավաք խումբը:

Երկրորդ՝ «Ամերիկյան պատվիրակության՝ միացյալ Հայաստանի նախագիծը Փարիզի խաղաղության վեհաժողովում» ենթագլխում լուսաբանվում է խաղաղության վեհաժողովում «միացյալ Հայաստանի» ստեղծման և Միացյալ Նահանգների կողմից Հայաստանի մանդատի ստանձնման ամերիկյան քաղաքականությունը: Ինչպես նշվեց, այն հիմնված էր «The Inquiry»-ի կողմից մշակված նախագծի վրա:

Երրորդ ենթագլխում, որը կրում է՝ «Միացյալ Հայաստանի վերաբերյալ Քինգ-Քրեյնի և Հարբորդի հանձնաժողովների առաջարկները» վերնագիրը, վերլուծության են ենթարկվում 1919 թ. ամռան-աշնան ամիսներին Վիլսոնի կողմից Մերձավոր Արևելք ուղարկված Քինք-Քրեյնի և Հարբորդի հանձնաժողովների՝ «միացյալ Հայաստանի» վերաբերյալ կատարված առաջարկները: Մասնավորապես համեմատական է անցկացվում և վերլուծվում են 1918 թ. «The Inquiry»-ի «ծովից ծով Հայաստանի» և Քինգ-Քրեյնի հանձնաժողովի՝ ավելի սեղմ տարածքով «միացյալ Հայաստանի» ստեղծման հիմնավորումները:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ. «ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁԱԽՈՂՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ»: Այն բաղկացած է երկու ենթագլխից: Առաջին՝ «Դաշնակիցների հայտարարությունների և քաղաքականության հակասականությունը» ենթագլխում քննական լուսաբանման են

ենթարկվում «միացյալ Հայաստանի» նախագծի ձախողման պատճառները: Վիլսոնը հայտնում էր իր պատրաստակամությունը՝ ստանձնելու Հայաստանի մանդատը և իրագործելու «միացյալ Հայաստանի» նախագիծը, սակայն դրան ընդդիմանում էին ոչ միայն հանրապետականները, այլև իր իսկ վարչակազմի մի շարք բարձրաստիճան անդամներ: Փաստերը ցույց են տալիս, որ իր շահերից ելնելով Դաշնակից երկրներից «միացյալ Հայաստանի» նախագծի դեմ էր հանդես գալիս նաև Ֆրանսիան: Դա մասնավորապես պայմանավորված էր Առաջին աշխարհամարտից հետո Օսմանյան կայսրության տրոհման վերաբերյալ անգլո-ֆրանսիական տարաձայնություններով:

Երկրորդ ենթագլխում, որը կրում է՝ «Թուրքական կողմի ջանքերը՝ խափանելու միացյալ Հայաստանի իրագործումը» վերնագիրը, պարզաբանվում է խաղաղության վեհաժողովում հայկական կողմի համագործակցությունը քրդերի ղեկավար Շերիֆ փաշայի հետ: Դրա հիմնական նպատակը, ինչպես նշում էին Ահարոնյանը և վեհաժողովի մյուս հայ պատվիրակները, քրդերի ու թուրքերի տարանջատման փորձ էր, որը, սակայն, չտվեց գործնական արդյունքներ: Լուսաբանվում է Մուդրոսի զինադադարից հետո երիտթուրքերի կողմից ստեղծված և ուղղորդված թուրքական «դիմադրության շարժման» ձևավորումը, որի հիմնական նպատակներից էր «միացյալ Հայաստանի» ստեղծման վիժեցումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ. Այստեղ ի մի են բերվում ատենախոսության հիմնական արդյունքները.

- Մուդրոսի զինադադարից հետո Միացյալ Նահանգները և Մեծ Բրիտանիան Հայկական միացյալ պատվիրակությանը պաշտոնական մակարդակով դրդեցին Փարիզի խաղաղության վեհաժողովում ներկայացնել «միացյալ Հայաստանի» նախագիծը, որն, ըստ ամերիկյան և բրիտանական կառավարությունների հավաստիացումների, ամբողջովին վայելում էր իրենց աջակցությունը: Այս երկու գերտերությունները, սերտորեն համագործակցելով հայ ղեկավարների հետ, դեռ պատերազմի վերջին տարիներին սկսեցին մշակել «միացյալ Հայաստանի» ամերիկյան և բրիտանական նախագծերի տարբերակները: Ընդ որում՝ ԱՄՆ-ը հանդիսանում էր «միացյալ Հայաստանի» ստեղծման հիմնական ջատագովը:
- 1919-1920 թթ. Վիլսոնի վարչակազմի արտաքին քաղաքականությունը բուռն քննադատության էր ենթարկվում մեկուսացման քաղաքականության ջատագով՝ ընդդիմադիր հանրապետական կուսակցության ղեկավարների կողմից: Վերջիններիս վերահսկողության տակ գտնվող ԱՄՆ-ի Սենատը մերժեց հաստատել Վերսալի խաղաղության պայմանագիրը: Վիլսոնը Հայաստանի մանդատի ստանձնումը կապում էր Կոնգրեսի կողմից Վերսալի պայմանագրի վավերացման և ԱՄՆ-ի՝ Ազգերի լիգային անդամակցության հարցի հետ, ինչը բացասական հետևանքներ ունեցավ «միացյալ Հայաստանի» իրագործման խնդրում:
- Մուդրոսի զինադադարից հետո՝ մինչև Հայաստանի Հանրապետության անկումը, վարչապետներ Քաջազնունու, Խատիսյանի և Օհանջանյանի կառավարություններն որդեգրել էին արևմտամետ դիրքորոշում: Սա գլխավորապես պայմանավորված էր Հայաստանի ղեկավարների տածած այն հույսերով, որ Դաշնակիցները կիրագործեն Հայաստանի և հայ ժողովրդի ազատագրման ու ինքնորոշման վերաբերյալ տրված

խոստումները: Զինադադարից հետո, սակայն, Արևմտյան Հայաստանը Դաշնակիցների, ներառյալ՝ ԱՄՆ-ի կողմից այդպես էլ չռազմակալվեց, և այնտեղ գտնվող թուրքական բանակը չզինաթափվեց և չզորացրվեց: Սա առաջնային պատճառներից մեկն էր, որը «միացյալ Հայաստանի» իրագործումն անիրականալի դարձրեց:

- 1920 թ. հետո «միացյալ Հայաստան» եզրույթը, որը մինչ այդ օգտագործվում էր «ամբողջական Հայաստան» անվանման հետ մեկտեղ, իմաստափոխվեց: Դա տեղի ունեցավ, երբ 1919 թ. վերջին ակնհայտ դարձավ, որ Միացյալ Նահանգները չի ստանձնելու Հայաստանի մանդատը և չի հոգալու Հայաստանի պաշտպանությունը: Եվրոպական Դաշնակից տերությունների ղեկավարները վերոնշյալ եզրույթի ներքո նկատի ունեին ոչ թե Արևելյան Հայաստանը, Օսմանյան կայսրության վեց հայկական նահանգները, Տրապիզոնի նահանգի մի մասը և Կիլիկիան միավորող հայկական պետությունը, ինչպես իրենք առաջարկում էին նախկինում, այլ ավելի սեղմ տարածքով Հայաստան:
- 1920 թ. հուլիսին՝ Ադրբեջանի խորհրդայնացումից շաբաթներ անց, բրիտանական վերջին զորամիավորումները դուրս բերվեցին Բաթումից: Բրիտանացիների այդ քայլը քեմալականների մոտ ամրապնդեց այն կարծիքը, որ Դաշնակիցները շահագրգռված չէին Հայաստանի Հանրապետությունը պաշտպանելու հարցում, և որ Խորհրդային Ռուսաստանը տարածաշրջանի միակ լուրջ գործոնն էր, որի հետ համագործակցությունը կարող էր օգտավետ լինել:
- ՀՀ-ի գոյության ողջ ընթացքում Դաշնակից երկրների ղեկավարները հիմնականում սահմանափակվեցին Հայաստանին միայն մարդասիրական և իրավաքաղաքական ու դիվանագիտական աջակցության տրամադրումով՝ քաջ գիտակցելով, որ դա բավարար չէր՝ պաշտպանելու Հայաստանի ինքնիշխանությունը և իրագործելու իրենց իսկ կողմից ստորագրված Սևրի պայմանագրի 89-րդ հոդվածը:
- 1920 թ. քաղաքական իրադրությունը փոխվեց՝ ի վնաս Հայաստանի և հօգուտ Թուրքիայի: Դա, առաջին հերթին, պայմանավորված էր վերջինիս հետ վերջնական հաշտության կնքման ձգձգումով և Դաշնակիցների միջև տարաձաշրջանի քաղաքական վերաձևավորման շուրջ առկա տարակարծություններով, որոնցից հմտորեն օգտվեց քեմալական շարժումը:
- Քեմալը Հայաստանի Հանրապետության վրա հարձակվելու վերջնական որոշումը կայացրեց 1920 թ. ամռանը, երբ ակնհայտ դարձավ, որ բրիտանական զորքերի վերջին ստորաբաժանումները դուրս են բերվում Անդրկովկասից, և Միացյալ Նահանգները չի ստանձնելու Հայաստանի մանդատը, ինչի դեպքում կապահովվեր Հայաստանի պաշտպանությունը թուրքական ագրեսիայից:
- Չնայած Սևրի պայմանագրի կնքումը ՀՀ-ին տվեց կարևոր իրավական փաստաթուղթ, սակայն ակնհայտ էր, որ վերջինս ունակ չէր՝ սեփական ուժերով այն կյանքի կոչելու: Դաշնակից երկրների ղեկավարները, թեև իրենց կառավարություններում ունեին ընդգծված հայանպաստ դիրքորոշում ունեցող ազդեցիկ գործիչներ, դրա իրագործման համար մտադիր չէին գործնական քայլեր կատարել:

- Խաղաղության վեհաժողովը բացման ժամանակ հայտարարեց, որ Հայաստանը, Սիրիան, Միջագետքը, Պաղեստինը և Արաբիան պետք է «ամբողջովին անջատվեն» թուրքական տիրապետությունից և դառնան ինքնուրույն: Հայտարարության մեջ նշվում էր, որ թուրքերն այդ երկրների ժողովուրդների հանդեպ չարաշահել էին իրենց իշխանությունը: Իբրև դրա ապացույց՝ մասնավորապես, վկայաբերվում էր հայերի զանգվածային կոտորածը: Հայաստանը, որը թուրքական տիրապետությունից ամենից շատ էր տուժել, ի տարբերություն մյուս երկրամասերի, այդպես էլ չստացավ իր ազատությունն ու անկախությունը: Վեհաժողովն, այդպիսով, կյանքի չկոչեց իր իսկ ստանձնած հանձնառությունը:
- Թեպետ «միացյալ Հայաստանը» կյանքի չկոչվեց, եվրոպացի և ամերիկացի գործիչները Լոզանի պայմանագրի կնքման ժամանակ և դրանից հետո երկար տարիներ շարունակում էին հավաստիացնել հայ գործիչներին, թե հետագայում Հայկական հարցը գտնելու է իր հանգուցալուծումը: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ նրանք շահագրգռված չէին վերացնելու Հայկական հարցը՝ այն Թուրքիայի դեմ հարկ եղած դեպքում որպես ճնշման լծակ օգտագործելու համար:
- Հայաստանի խորհրդայնացումից հետո աշխարհասփյուռ հայությունը շարունակում էր հուսալ, որ Վիլսոնյան իրավարար վճիռն ի վերջո կյանքի է կոչվելու, և «ազատ, անկախ ու միացյալ Հայաստանը» դառնալու է իրականություն: Իհարկե, դա լոկ երազանք չէր, և այս նպատակի իրականացման համար տարբեր հայկական քաղաքական-հասարակական կազմակերպություններ, տարբեր ձևաչափերով, տասնամյակներ ի վեր կատարեցին լուրջ և հետևողական աշխատանք: Սույն կազմակերպությունների պահանջատիրության հիմքում դրված էին 1919-1920 թթ. «միացյալ Հայաստանի» պատվիրակության իրավական ձեռքբերումները:
- Չնայած խաղաղության վեհաժողովում ու դրանից անմիջապես հետո Հայկական հարցը չգտավ իր հանգուցալուծումը, Սևրի պայմանագրի 89-րդ հոդվածը և Վիլսոնի կողմից կայացված իրավարար վճիռն այսօր էլ շարունակում են առանցքային դեր խաղալ Հայկական դատի և պահանջատիրության հետապնդման խնդրում: Դրա վառ օրինակներից է «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիրը», որով առանձնահատուկ կարևորություն է տրվում վերոնշյալ պայմանագրին և իրավարար վճռի դերին ու նշանակությանը՝ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հարցում:
- 1920 թ. վերջին Հայաստանի Հանրապետությունը, ի հետևանք քեմալա-բոլշևիկյան ագրեսիայի, կորցրեց իր անկախությունը և տարածքների զգալի մասը: Խորհրդային Հայաստանը չէր կարող միջազգային հարթակներում բարձրացնել Վիլսոնի իրավարար վճռի իրականացման հարցը, ինչը հնարավոր եղավ միայն 1991 թ. անկախության վերականգնումից հետո:
- Մեր խորին համոզմամբ՝ հայկական պահանջատիրության հիմքում պետք է ընկած լինի Միացյալ Նահանգների, Մեծ Բրիտանիայի, ինչպես նաև ՄԱԿ-ի իրավանախորդ հանդիսացող Ազգերի լիգայի կողմից Հայկական հարցի հանգուցալուծման վերաբերյալ ստանձնված իրավական պարտականությունների իրագործումը:

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հոդվածներում.

1. British Policy towards the Armenian Question from the Armistice of Mudros to the Opening of the Paris Peace Conference, Fundamental Armenology, Issue 2 (6), National Academy of Sciences of the Republic of Armenia, Yerevan, 2017.
2. ԱՄՆ պետական փաստահավաք խմբի 1918 թ. Հայաստանի սահմանազատման առաջարկը, «Պատմություն և հասարակագիտություն» տարեգիրք 4, Երևան, 2018, էջ 201-209:
3. Առնոլդ Թոյնբիի բրիտանական Արտգործնախարարության «Ազգությունների խնդիրը Կովկասում» հատուկ հուշագիրը (1917 թ. հոկտեմբեր), «Հայագիտական հանդես», N⁰1 (39), Երևան, 2018, էջ 208-216:
4. ԱՄՆ կառավարական «The Inquiry» մարմնի անդամ Վիլյամ Վեստերմանի Հայաստանի սահմանազատման զեկուցագիրը, «Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի», 1 (44), Երևան, 2018, էջ 516-522:
5. ԱՄՆ պետական փաստահավաք խումբը (The Inquiry) հայկական հարցի լուծման ուղիներում (1917-1919 թթ.), «ՀՊՄՀ Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ. Գիտական հանդես», 1, Երևան, 2018, էջ 212-217:
6. Առնոլդ Թոյնբիի հուշագրությունը բրիտանական արտգործնախարարության «Պանթուրքիստական շարժման մասին» (1917 թ. սեպտեմբեր), «Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի», 1 (44), Երևան, 2018, էջ 523-531:
7. The San Remo Conference and the Armenian Question, «Интерактивная Наука», 4(26), Чебоксары, 2018, сс. 17-19.
8. Продолжение антиармянской политики младотурков после мудросского перемирия (конец 1918 г. - начало 1919 г.) «Интернаука»: научный журнал» № 13(47), Москва, 2018, сс. 63-65.
9. Թուրքական կողմի ճիգերը խեղելու Հայկական հարցի հանգուցալուծումը Մուդրոսի զինադադարի կնքման ժամանակ, «Իննովացիոն հնարավորությունները և մարտահրավերները ժամանակակից աշխարհում. Գիտական հոդվածների ժողովածու», ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն, Երևան, 2018, էջ 294-301:

Назарян Геворг Паргевович

Армянский, американский и британский проекты «Объединенной Армении» на Парижской мирной конференции и развивающихся вокруг них событий

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 «История Армении»

Защита состоится 30-го апреля 2021 г., в 15^{00}, на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории НАН РА (0019, Ереван, пр. М. Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

Данное исследование посвящено изучению армянских, американских и британских проектов «Объединенной Армении», которые были разработаны вовремя и после Первой мировой войны, и в 1919 году были официально представлены на Парижской мирной конференции. Диссертация состоит из введения, четырех глав, заключения и списка использованных источников и литературы. Приложения, следующие за диссертацией, включают два документа из американского и британского национальных архивов. Важность и актуальность исследования, его научная новизна, поставленные автором цели и задачи, изложенные во Введении, анализ использованных источников и литературы включены в дипломную работу.

Первая глава под названием «Деятельность армянских делегаций для создания «Объединенной Армении»» представляет ранние разработки проекта «Объединенной Армении» во время Первой мировой войны и после Мудросского перемирия. Необходимо подчеркнуть, что разработка проекта была проведена при тесном политическом сотрудничестве армянской стороны с европейскими Союзниками и США. В этой главе также исследованна деятельность двух армянских делегаций («Национальной» во главе с П. Нубаром и Республики Армении во главе А. Агароняном) во время Парижской мирной конференции. Проведён анализ причин разногласий между двумя армянскими делегациями и попытки их преодоления для реализации «Объединенной Армении».

Вторая глава, озаглавленная «Внешняя политика Великобритании в отношении армянского вопроса и британский проект «Объединенной Армении» на Парижской мирной конференции» начинается с анализа британской политики в отношении армянского вопроса во время Первой мировой войны. Как и предложения от Армении и

Америки, британцы, после Первой мировой войны, тоже отдали предпочтение «Объединенной Армении», которая включала Восточную Армению наряду с провинциями Западной Армении с жизненно важными выходами в Черное и Средиземное моря. Важно отметить, что, хотя британцы поддерживали план создания «Объединенной Армении», они предпочитали, чтобы американцы или французы взяли под свою опеку (как мандат Лиги Наций или в другом формате) Армению и реализировали вышеупомянутый проект.

Третья глава, озаглавленная «Внешняя политика США и армянский вопрос в контексте Парижской мирной конференции», представляет американский проект объединенного государства Армения, которое охватывало бы территорию Западной Армении (от Черного до Средиземного морей) и Восточной Армении. Данное предложение было официально представленно американской делегацией на Парижской мирной конференции. Нужно подчеркнуть, что этот американский проект начался разрабатываться в 1918 году, ещё до окончания войны, государственной исследовательной группой «The Inquiry», которая действовала по поручению президента В. Вильсона. Многие члены группы вошли в состав американской делегации мирной конференции, которую возглавил Вильсон. Президент США поддерживал план осуществления «Объединенной Армении», но, к сожалению, связывал этот вопрос с членством США в Лиге Наций и взятием армянского мандата по системе разработанной Лигой согласно статье 22 Версальского договора. В ноябре 1919 года Сенат США отказался ратифицировать Версальский договор в связи с наличием в нём отсылок к Лиге Наций.

В четвертой главе, озаглавленной «Причины провала «Объдиненной Армении»» представлены основные факторы, по которым армянский, американский и британский проекты «Объединенной Армении» не были реализованы. Это случилось в связи разногласий Союников насчёт раздела Османской империи, политического противостояния планам В. Вильсона оппозиционной Республиканской партией США и началом движения М. Кемаля и его успешное сотрудничество с В. Лениным и другими лидерами большевиков.

В последней части диссертации представлено заключение, в котором обобщены наиболее важные моменты и ключевые выводы, представленные в исследовании.

Nazaryan Gevorg Pargev

Armenian, American and British Projects of "United Armenia" at the Paris Peace Conference and their Surrounding Developments

Dissertation for the degree of Doctor of History on the specialization of "History of Armenia" 07.00.01

The defense of the dissertation will be held on April 30, 2021, at 15^{00} at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan ave., 24/4).

SUMMARY

This study is an analysis of the Armenian, American and British projects of "UnitedArmenia," which were developed during and after World War I, and in 1919, were officially presented at the Paris Peace Conference.

The dissertation consists of an introduction, four chapters, conclusions and a list of used sources and literature. The Appendices, following the dissertation, include two documents from the American and British national archives. The importance and relevance of the research, its scientific novelty, the goals and tasks set by the author argued in the introduction, an analysis of used sources and literature are also included in the dissertation.

The first chapter entitled "The Activities of Armenian Delegations for the Creation of "United Armenia,"" presents the early developments of the project of "United Armenia" during World War I and after the conclusion of the Armistice of Mudros.

It is important to note, that this project was carried out by the Armenian side in close cooperation with the European Allies and the United States. In this chapter, the activities of the two Armenian delegations (the "National," headed by Poghos Nubar and that of the Republic of Armenia, headed by Avetis Aharonyan) at the Paris Peace Conference are also examined. An analysis of the causes that led to disagreements between the two Armenian delegations and attempts at overcoming them for the sake of realizing the objective of "United Armenia" is also made.

The second chapter entitled "Foreign Policy of Great Britain towards the Armenian Question and the British Project of "United Armenia" at the Paris Peace Conference,"

begins with an outline of British policy towards the Armenian Question during World War I. Like the Armenian and American proposals, the British favored "United Armenia," which included Eastern Armenia along with Western Armenian provinces, with vital outlets to the Black and Mediterranean seas. It must be pointed out, that although the British supported the plan for creation of "United Armenia," they, nevertheless, preferred that Armenia would be put under the protection of either the Americans or the French (under a League of Nations mandate or another format), who in turn would also be responsible for realizing this project.

The third chapter entitled "The Foreign Policy of the United States and the Armenian Question within the Context of the Paris Peace Conference," presents the American project of united "State of Armenia," which was to encompass the eastern and western (from Black to the Mediterranean seas) portions of the country. The proposal was formally submitted by the American delegation to the Paris Peace Conference. It must be emphasized, that this American project began to be developed in 1918, prior to the end of war, by the American government study group "The Inquiry," established by Woodrow Wilson to prepare materials for the peace negotiations following World War I. Many of the members of "The Inquiry" subsequently became members of the American delegation to the Paris Peace Conference, which was headed by Wilson.

The US president supported the creation of "United Armenia," however, unfortunately, he connected this question with American membership in the League of Nations and taking of Armenia's mandate by the United States according to the system developed by the League and included in Article 22 of the Treaty of Versailles. In November of 1919, the US Senate rejected the approval of the Treaty of Versailles and with it also the American membership in the League of Nations.

The fourth chapter entitled "The Causes of "United Armenia's" Failure," presents the main reasons why the Armenian, American and British projects of "United Armenia" were not realized. This was due to several reasons including Allied disagreements about the partitioning of the Ottoman Empire, domestic opposition to President Wilson's international policies by the Republican Party and the outbreak of the Kemalist movement, which was able to secure the support of Lenin and other Bolshevik leaders.

The final part features Conclusions, which summarizes the most important points and key finds that are presented in the dissertation.